Հայտարարություն	Annonce
« Հայաստանում ֆրանսիական համալսարան » հիմնադրամը (ՀՖՀՀ) հայտարարում է մրցույթ **Իրավաբանական ֆակուլտետի դասախոսներ**ի ընտրության համար : ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ Նշված առարկաների դասերի վարում Բակալավրիատի 2-րդ և Մագիստրատուրայի 1-2 կուրսերում՝	La Fondation « Université Française en Arménie » (UFAR) organise un concours pour la sélection des **Enseignant(e)s de la faculté de Droit**. **PRINCIPALES RESPONSABILITÉS** Enseignement des matières sous-mentionnées en 1 de Licence et 1-2 de Master:
Ընկերությունների հարկեր **Կիսամյակ**՝ 1-ին/Մագիստրատուրա 2 կուրս, **Դասավանդման լեզուն**՝ հայերեն, **Ժամաքանակ**՝ 21 ժամ=14 մուտք դասախոսություն (1 խումբ), երեկոյան ժամերի (18:30-ից 21:30)։ Դասընթացի նպատակն է ձևավորել հարկային օրենսդրության և հատկապես հարկային իրավախախտումների վերաբերյալ իրավական նորմերի կիրառման գիտելիքներ։ Դասընթացն ուսումնասիրում է իրավաբանական անձանց հարկահիրավական կարգավիճակը, հարկային իրավախախտումները, պատասխանատվության հիմքերը և հարկային վեճերի լուծման մեխանիզմները։	**Fiscalité des sociétés** **Semestre** : 1/Master 2, **Langue d'enseignement** : arménien, **Heures d'enseignement :** 21 heures=14 séances de CM (1 groupe), en soirée (de 18h30 à 21h30). Ce cours vise à développer une connaissance approfondie des normes juridiques de la législation fiscale, en particulier de celles relatives aux infractions fiscales. L'objectif est d'étudier le statut juridique des personnes morales en droit fiscal, les infractions fiscales, les fondements de la responsabilité et les mécanismes de règlement des litiges fiscaux.
Շինարարական իրավունք **Կիսամյակ**՝ 1-ին/Մագիստրատուրա 1 կուրս, **Դասավանդման լեզուն**՝ հայերեն, **Ժամաքանակ**՝ 16.5 ժամ=11 մուտք դասախոսություն (1 խումբ), երեկոյան ժամերի (18:30-ից 21:30)։ Դասընթացի նպատակն է ուսանողներին փոխանցել շինարարական գործունեության իրավական կարգավորման վերաբերյալ ընդհանուր պատկերացում և զարգացնել այնպիսի հմտություններ, որոնք անհրաժեշտ են շինարարական նախագծերի իրավական ուղեկցման, ռիսկերի գնահատման և վեճերի լուծման համար։ Դասընթացը ներկայացնում է շինարարական գործընթացի հիմնական փուլերը կարգավորող իրավական նորմերը. ուսանողները ծանոթանում են շինարարական գործընթացի հիմնական մասնակիցների իրավական կարգավիճակին, շինարարական պայմանագրերի առանձնահատկություններին, պատասխանատվության իրավական հիմքերին և վեճերի լուծման մեխանիզմներին։ Դասընթացը	**Droit de la construction** **Semestre** : 1/Master 1, **Langue d'enseignement** : arménien, **Heures d'enseignement :** 16.5 heures=11 séances de CM (1 groupe), en soirée (de 18h30 à 21h30). Le cours de Droit de la construction vise à offrir aux étudiants une vue d'ensemble du cadre juridique applicable aux activités de construction. Il présente les principales règles régissant les différentes phases du processus de construction, depuis la planification du projet jusqu'à l'achèvement des travaux et au règlement des éventuels litiges. Les étudiants sont ainsi initiés au statut juridique des principaux intervenants, aux spécificités des contrats de construction, aux mécanismes de responsabilité juridique ainsi qu'aux modes de règlement des litiges. Cette matière mobilise des notions relevant à la fois du droit privé et du droit public, notamment du droit civil, du droit administratif, du droit de l'urbanisme et d'autres branches du droit applicables au secteur de la construction.

համադրում է մասնավոր և հանրային իրավունքի տարրերը՝ ներառելով քաղաքացիական, վարչական, քաղաքաշինական և շինարարության ոլորտին առնչվող այլ իրավական նորմերի կիրառումը:	
Համեմատական և խորացված քրեական իրավունք և հանցագործությունների նոր ձևեր **Կիսամյակ**՝ 1-ին/Մագիստրատուրա 1 կուրս, **Դասավանդման լեզուն**՝ հայերեն, **Ժամաքանակ**՝ 16.5 ժամ=11 մուտք դասախոսություն (1 խումբ), երեկոյան ժամերի (18:30-ից 21:30): Դասընթացի նպատակն է ուսումնասիրել քրեական իրավունքի ժամանակակից վերափոխումները՝ պայմանավորված նոր հավաքական ռիսկերի և հանցագործության նոր ձևերի առաջացմամբ: Հաշվի առնելով, որ կիբեռհանցագործությունն արդեն իսկ ուսումնական ծրագրում առանձին դասընթացի առարկա է, այս դասընթացը կկենտրոնանա հանցագործության այլ՝ նոր կամ զարգացող ձևերի ուսումնասիրության վրա: Կքննարկվեն, մասնավորապես, բնապահպանական հանցագործությունները, հանրային առողջության դեմ ուղղված իրավախախտումները, միջազգային ահաբեկչությունը, քրեական պատասխանատվության նոր ձևերը, ինչպես նաև ժամանակակից քրեաիրավական արձագանքների զարգացումները (համաձայնությամբ իրականացվող արդարադատություն, վերականգնողական արդարադատություն, ազատազրկմանը այլընտրանքային պատիժներ): Առանձնահատուկ ուշադրություն կդարձվի նաև արհեստական բանականության առաջադրած մարտահրավերներին, ինչպես նաև քրեական իրավունքի և քրեական արդարադատության համակարգերի զարգացման հեռանկարներին՝ գլոբալացման և սոցիալական ռիսկերի փոփոխության համատեքստում:	**Droit pénal avancé et comparé et nouvelles formes de criminalité** **Semestre** : 1/Master 1, **Langue d'enseignement** : arménien, **Heures d'enseignement :** 16.5 heures=11 séances de CM (1 groupe), en soirée (de 18h30 à 21h30). Ce cours a pour objectif d'analyser les transformations contemporaines du droit pénal face à l'émergence de nouveaux risques collectifs et de nouvelles formes de criminalité. Compte tenu du fait que la cybercriminalité fait déjà l'objet d'un enseignement distinct au sein du cursus, ce cours se concentrera sur d'autres formes émergentes de criminalité. Les thématiques abordées pourront notamment inclure la criminalité environnementale, les infractions sanitaires, le terrorisme international, les nouvelles formes de responsabilité pénale ainsi que les évolutions des réponses pénales contemporaines (justice négociée, justice réparatrice, sanctions alternatives à l'emprisonnement). Une attention particulière sera aussi portée aux défis soulevés par l'intelligence artificielle et aux perspectives d'évolution du droit pénal et des systèmes de justice pénale dans un contexte de mondialisation et de mutation des risques sociaux.
Ներքին անվտանգության իրավունք **Կիսամյակ**՝ 1-ին /Մագիստրատուրա 1 կուրս, **Դասավանդման լեզուն**՝ հայերեն, **Ժամաքանակ**՝ 16.5 ժամ=11 մուտք դասախոսություն (1 խումբ), երեկոյան ժամերի	**Droit de la sécurité intérieure** **Semestre** : 1/Master 1, **Langue d'enseignement** : arménien, **Heures d'enseignement :** 16.5 heures=11 séances de CM (1 groupe), en soirée (de 18h30 à 21h30).

(18:30-ից 21:30)։ Դասընթացի նպատակն է ուսանողներին փոխանցել ներքին անվտանգության իրավունքի, անվտանգության ոլորտում ներգրավված պետական մարմինների իրավասությունների և ժամանակակից անվտանգային մարտահրավերների վերաբերյալ ամբողջական և համակարգային գիտելիքներ։ Դասընթացն առանձնահատուկ ուշադրություն է դարձնում հիմնարար իրավունքների պաշտպանության, իրավունքի գերակայության, ոստիկանության ժողովրդավարական վերահսկողության, անվտանգության կառավարման, մարդկային անվտանգության, ինչպես նաև ազգային և ներքին անվտանգության միջև փոխազդեցությունների ուսումնասիրմանը։	L'objectif du cours est de permettre aux étudiants d'acquérir une compréhension globale et systémique du droit de la sécurité intérieure, des compétences des institutions publiques intervenant dans ce domaine, des défis sécuritaires contemporains. Le cours accorde une attention particulière à la protection des droits fondamentaux, au respect du principe de l'État de droit, au contrôle démocratique des forces de police, à la gouvernance de la sécurité, à la sécurité humaine et aux interactions entre sécurité nationale et sécurité intérieure.
Վերականգնողական արդարադատությունը քրեական իրավունքում **Կիսամյակ**՝ 2-րդ /Մագիստրատուրա 2 կուրս, **Դասավանդման լեզուն**՝ ցանկալի է անգլերեն կամ ֆրանսերեն, **Ժամաքանակ՝** 16.5 ժամ=11 մուտք դասախոսություն (1 խումբ), երեկոյան ժամերի (18:30-ից 21:30)։ Դասընթացի նպատակն է ներկայացնել վերականգնողական արդարադատության տեսական և գործնական հիմունքները, ուսումնասիրել միջազգային լավագույն փորձը և առաջարկել քննադատական վերլուծություն՝ վերականգնողական արդարադատության մեխանիզմները Հայաստանի քրեական արդարադատության համակարգում ներդնելու հնարավորությունների և պայմանների վերաբերյալ։	**La justice réparatrice en droit pénal** **Semestre** : 2 /Master 2, **Langue d'enseignement** : souhaité en anglais ou en français **Heures d'enseignement :** 16.5 heures=11 séances de CM (1 groupe), en soirée (de 18h30 à 21h30). L'objectif du cours est de présenter les fondements théoriques et pratiques de la justice réparatrice, d'étudier les meilleures pratiques internationales et de proposer une analyse critique des possibilités et des conditions de mise en œuvre des mécanismes de justice réparatrice dans le système de justice pénale de l'Arménie.

ՊԱՀԱՆՋՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կրթություն և Փորձ

- Իրավաբանական գիտությունների թեկնածուի կոչում կամ իրավագիտության մագիստրոսի կոչում և 5 տարվա համապատասխան մասնագիտական փորձ,
- Դասավանդման նվազագույնը 3 տարվա փորձառություն,
- Նվազագույնը 3 տարվա մասնագիտական փորձ համապատասխան ոլորտում,
- Ֆրանսերենի և/կամ անգլերենի պարտադիր իմացություն:

ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

Մրցույթը տեղի կունենա 2 փուլով :

1-ին փուլում ներկայացվում են փաստաթղթերը :

Համաձայն ՀՖՀՀ-ի դասախոսների աշխատանքի ընդունման կարգի՝ մրցույթի մասնակիցները պետք է ներկայացնեն իրենց թեկնածությունը՝ ուղարկելով հետևյալ փաստաթղթերը՝

- Ինքնակենսագրություն (CV) հայերեն և ֆրանսերեն կամ անգլերեն՝ ընդգծելով տվյալ ոլորտում մասնագիտական փորձը
- Բարձրագույն կրթության վկայականի /դիպլոմի/, գիտական աստիճանի դիպլոմի, գիտական կոչման վկայականի պատճենները,
- Հրատարակված գիտական աշխատությունների ցանկը,
- Տվյալ առարկայի դասավանդման հիմնական ակնկալվող արդյունքները (գիտելիքները, կարողությունները և հմտությունները), ինչպես նաև դասընթացի համար առաջարկվող ընտրված գրականության ցանկը (առավելագույնը՝ 3 էջ):

2-րդ փուլում ընտրված թեկնածուները կանցնեն հարցազրույց:

Փաստաթղթերն ուղարկել job@ufar.am էլեկտրոնային հասցեով մինչև 2026թ. օգոստոսի 27-ը՝ նամակի վերնագրում հստակ նշելով, թե որ առարկայի համար եք դիմում :

QUALIFICATIONS ET COMPETENCES REQUISES

Formation et Expérience

- Doctorat en Droit ou Master en Droit et cinq ans d'expérience professionnelle pertinente,
- Au moins 3 ans d'expérience d'enseignement,
- Au moins 3 ans d'expérience professionnelle dans le domaine de spécialité,
- Maîtrise obligatoire du français et/ou de l'anglais.

PROCEDURE DE DEPOT DE CANDIDATURE

Le concours se déroulera par 2 étapes.

La 1ère étape comprend la présentation des documents.

Conformément à la Procédure de recrutement des enseignants de l'UFAR, les participants au concours doivent déposer leur candidature, présentant les documents suivants :

- Le CV en arménien et en français ou en anglais précisant l'expérience professionnelle dans le domaine en question,
- Les copies du diplôme d'enseignement supérieur, du titre scientifique ou du certificat de grade scientifique,
- La liste des œuvres scientifiques publiées,
- Les principaux résultats d'apprentissage attendus à la fin de l'enseignement de la matière (connaissances, compétences, aptitudes) ainsi qu'une bibliographie sélective de lectures conseillées pour le cours (max. 3 pages)..

Lors de la 2ème étape, les candidats choisis passeront un entretien.

Les documents doivent être envoyés à l'adresse électronique job@ufar.am, avant le 27 août 2026, précisant dans le courriel le nom de matière pour laquelle vous présentez votre candidature.

Հարցազրույցի կհրավիրվեն միայն ընտրված թեկնածուները:	Ne seront contactés que les candidats choisis pour l’entretien.